ՏԵՂԵԿԱՆՔ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 32. Կատարողական գործողությունների վայրը և կատարողական վարույթի փոխանցումը

1. Կատարողական գործողությունները կատարվում են պարտապանի բնակության (գտնվելու) կամ նրա գույքի գտնվելու վայրում:

2. Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրող կատարողական թերթը կատարվում է այդ գործողությունների կատարման վայրում:

3. Կատարողական վարույթը կարող է փոխանցվել՝

1) մեկ հարկադիր կատարողից մյուսին՝ հարկադիր կատարման ծառայության մարզային (Երևանի քաղաքային) բաժնի կամ բաժանմունքի պետի կողմից.

2) հարկադիր կատարման ծառայության մեկ մարզային բաժնից (բաժանմունքից) մյուս մարզային բաժին (բաժանմունք)՝ գլխավոր հարկադիր կատարողի կողմից:

3. 1. Կատարողական վարույթի շրջանակում առանձին կատարողական գործողության իրականացումը Գլխավոր հարկադիր կատարողի կողմից սահմանված դեպքերում և կարգով կարող է վերապահվել այլ հարկադիր կատարողի՝ առանց կատարողական վարույթը փոխանցելու:

3. 2. Կատարողական վարույթի շրջանակում առանձին օժանդակ գործողություններ կարող են իրականացվել հարկադիր կատարման ծառայության այլ կառուցվածքային ստորաբաժանման (տարածքային մարմնի) կամ այլ աշխատակցի կողմից: Օժանդակ գործողությունների ցանկը, դրանց իրականացման կարգը սահմանում է Գլխավոր հարկադիր կատարողը.

4. Նույն պարտապանի նկատմամբ մեկից ավելի կատարողական վարույթները կենտրոնացվում են նույն հարկադիր կատարողի մոտ:

Հոդված 32. 1. Կատարողական վարույթները միացնելը և առանձնացնելը

1. Կատարողական գործողությունների առավել արդյունավետ կատարման նպատակով միմյանց հետ փոխկապակցված կամ կատարողական վարույթի մասնակիցների լրիվ կամ մասնակի համընկնող կազմ ունեցող մի քանի կատարողական վարույթներ կարող են միացվել մեկ վարույթում, կամ մեկ կատարողական վարույթից կարող են առանձնացվել առանձին պահանջներով վարույթներ:

2. Կատարողական վարույթների միացման և առանձնացման մասին որոշումն ընդունում է՝

1) հարկադիր կատարման ծառայության համապատասխան կառուցվածքային ստորաբաժման (տարածքային մարմնի) ղեկավարը, եթե միացվում են տվյալ ստորաբաժանումում իրականացվող կատարողական վարույթներ, կամ եթե առանձնացվող կատարողական վարույթները ենթակա են իրականացման տվյալ ստորաբաժանումում.

2) Գլխավոր հարկադիր կատարողը, եթե միացվում են հարկադիր կատարման ծառայության տարբեր ստորաբաժանումներում իրականացվող կատարողական վարույթներ, կամ եթե առանձնացվող կատարողական վարույթը ենթակա է փոխանցման հարկադիր կատարման ծառայության մեկ այլ ստորաբաժանում: